ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 24

ԽՈՐՔԱՅԻՆ ՊՈՄՊԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով համայնքի բնակիչ Քալաշյան Ֆատոյի հարակից տան մոտ գտնվող խորքային պոմպի վերանորոգման աշխատանքները կազմակերպելու համար

կարգադրում եմ

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝/Մ.Միքայելյան/ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ավագանու անդամներ Տիգրան Սարգսյանին,Սարգիս Գուլինյանին /իրենց համաձայնությամբ/:

4.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2018թ.
գ.Տանձուտ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Տանձուտ

համայնքի ղեկավարի 2018 թվականի

հոկտեմբերի 22-ի N 24 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Մ. Միքայելյան համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Ա. Գրիգորյան համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հ. Գրիգորյան համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ

Ա. Խաչատրյան համայնքապետարանի խմելու ջրի խորքային հորերի սպասարկող բանվոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 23

ՀՐԱՉՅԱ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հրաչյա Մինասյանի 2018 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը

կարգադրում եմ՝

1.Համայնքի մշակույթի տան տնօրեն Հրաչյա Մինասյանին 2018 թվականի հոկտեմբերի 15-ից տրամադրել 2018 թվականի ամենամյա արձակուրդ 24 աշխատանքային /20 նվազագույն, 4 լրացուցիչ/ օր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի նոյեմբերի 16-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2018 թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 113

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տանձուտ համայնքի բնակիչ՝ Վաչագան Ավետիսյանին ժառանգության իրավունքով հատկացվել է 0.21 հա սեփականշնորհված հողամաս :Քարտեզագրման և գույքագրման ժամանակ հողամասի փաստացի մակերսը կազմել է 0.2271 հա :Հողամսի կից ավել զբաղեցրած 0.0171 հա հողը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով խատեսված հողամասերի ցանկում ,չի խախտում անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով,ՏԻՄ -ի ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 32-րդ և հիմք ընդունելով Վաչագան Ավետիսյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ժառանգության իրավունքով սեփականշնորհված հողամասի կից ավել զբաղեցրած 0.0171 հա հողը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Վաչագան Ավետիսյանին ծածկագիր 04-092-069-007:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել Վաչագան Ավետիսյանին՝ ծնված 1955 թվականին, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 114

ԱՀԱՐՈՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի N 4 որոշումը, Անգելինա Եղիազարյանի ծննդյան վկայականը և Ահարոն Եղիազարյանի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի դիմումը

Որոշում եմ

1. Տանձուտ Համայնքի բնակիչ Ահարոն Եղիազարյանիի առաջին երեխայի ծննդի հետ կապված կիրառել խրախուսանք՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2018թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 115

ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տանձուտ համայնքի բնակիչ՝ Գոհար Փաշայի Բաբայանի առուվաճառքի պայմանագրով ձեռք է բերել 0,15հա տնամերձ հողամաս:Քարտեզագրման և գույքագրման ժամանակ տնամերձի փաստացի մակերսը կազմել է 0.1626 հա: Տնամերձին կից ավել զբաղեցրած 0.0126 հա հողը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով խատեսված հողամասերի ցանկում ,չի խախտում անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով,ՏԻՄ -ի ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 32-րդ և հիմք ընդունելով Գոհար Բաբայանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 0.0126 հա հողը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Գոհար Բաբայանին ծածկագիր 04-092-013-009:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմաը գրանցել Գոհար Բաբայանի՝ ծնված 1982 թվականին, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 116

ՎՐԵԺ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 18-ի թիվ 2 որոշումը և Վրեժ Գրիգորյանի 2018թ. հոկտեմբերի 29-ի դիմումը

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի բնակիչ Վրեժ Գրիգորյանին պատկանող տնամերձ հողամասին բնակելի տնով /ծածկագիր 04-092-032-014/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք 13փողոց 19 տուն հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանում ՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 117

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով և հաշվի առնելով ջեռուցման բացակայությունը

որոշում եմ՝

1.2018 թվականի նոյեմբերի 1-ից դադարեցնել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները:

2.2018 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2019 թվականի մայիսի 1-ը մանկապարտեզի վարիչ Արմանուշ Հայրապետյանին և հաշվապահ Հասմիկ Կոստանյանին վճարել հարկադիր պարապուրդ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԻԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 118

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 18-ի թիվ 2 որոշումը և Վարդան Գրիգորյանի 2018թ. հոկտեմբերի 29-ի դիմումը

Որոշում եմ

1. Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի բնակիչ Վարդան Գրիգորյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 04-092-040-003/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք 19 փողոց 19 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանում ՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ'ԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 119

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 5-րդ մասով, ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության օրենքը և հիմք ընդունելով քաղաքացի Արման Հովհաննիսյանի 2018 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը:

Տանձուտ համայնքի բնակիչ Արման Հովհաննիսյանին Տանձուտ համայնքի 18 փողոց թիվ 6 հասցեում գտնվող սեփական արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցել է 91,35 ք.մ. արտաքին մակերեսով պահեստ. Հաշվի առնելով, որ շինությունը բավարարում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտի իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների տակ:

Որոշում եմ՝

1.Արման Հովհաննիսյանի կողմից կառուցված 91,35 ք.մ. պահեստը ճանաչել օրինական:

2.Օրինականացման համար Արման Հովհաննիսյանից գանձել (15000x91,35x0,086) 117842 ՀՀ դրամ գումար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վերը նշված 117842 ՀՀ դրամը համայնքի բյուջե (900335237237) վճարման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ.
գ.Տանձուտ